ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «03» 07 2020թ N° 745-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՌԵՏԻՆԵ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով և 2020 թվականի հունիսի 22-ի N ՀՀ ԷՆ ԳՀԱՊՁԲ-20/26-142-20/1 պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով.

հ ր ա մ ա յ ում ե մ.

1. 2020 թվականի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված 600 զույգ ռետինե երկարաճիտք կոշիկների (այսուհետ՝ կոշիկներ) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանձման և բաշխման գործընթացների իրականացումն ապահովելու նպատակով.

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության անասնաբուժության բաժնի պետի ժ/պ Ա. Դանիելյանին՝ մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը կոշիկները հանձնել Կազմակերպությանը:

2. Կազմակերպության տնօրեն Տ.Գասպարյանին՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխումը և համայնքը սպասարկող անասնաբույժներին բաշխումը,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության, ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություններ ներկայացնել հաշվետվություն կոշիկների բաշխված քանակության ու մնացորդի վերաբերյալ,

3) ընդունել ի գիտություն, որ կոշիկների պահպանումն իրականացվում է Կազմակերպության կողմից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տ.Գաբրիելյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ